

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով եպիսկոպոսաց ժողովի բարեկարգությանց հանձնախումբը, նախագահությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսի, իր երկրորդ նստաշրջանը գումարեց Մայր Աթոռ ս. Էջմիածնում սույն թվականի նոյեմբերի 6—9 օրերին:

Հանձնախմբի աշխատանքներին մասնակցեցին՝

Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի.

Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանը՝ հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի.

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.

Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը՝ առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի.

Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյանը՝ Բեյրութից.

Տ. Շահե եպիսկոպոս Անեմյանը՝ դիվանապետ Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Առաջին նիստը բացվեց նոյեմբերի 6-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի աղոթքով և ողջույնի խոսքով:

Հանձնախումբը գումարեց 4 նիստ, որոնց ընթացքում վերանայեց անցյալ տարի իր պատրաստած ծիսական բարեկարգությանց նախագիծը, վերջին մեկ տարվա ընթացքում ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Հանձնախումբը պարտավորություն ստանձնեց ընդունելի նկատված բոլոր թելադրությունները մուծել նախագծի մեջ և մոտ ապագայում Նորին Սրբությանը ներկայացնել իր վերջնական ձևի մեջ:

Նոյեմբերի 14-ին, ժամը 13-ին, հանձնախումբը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր փակման նիստը գումարեց և զեկուցեց իր կատարած աշխատանքի մասին:

Նորին Սրբությունը Իր բարձր գնահատանքի խոսքն ուղղելով հանձնախմբին՝ հույս հայտնեց, որ սկսված գործը իր ցանկալի ավարտին կհասնի շուտով ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցու:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

18-ը նոյեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին